ՏԵՂԵԿԱՆՔ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. 1) «Սնանկության մասին» 2006 թվականի դեկտեմբերի 25-ի թիվ ՀՕ-51-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15.5-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ ~~կետում «հայցի ապահովման բոլոր կատարողական վարույթները» բառերը փոխարինել «ոչ գույքային բնույթ ունեցող բոլոր կատարողական վարույթները, բացառությամբ քաղաքացու վտարման, ինչպես նաև պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթների» բառերով.~~կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) կարճվում են գույքային բռնագանձումներով և ոչ գույքային բնույթ ունեցող ցանկացած կատարողական վարույթ, որոնք չեն ազդում սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառվող գույքի և իրավունքների վրա, ինչպես նաև սույն օրենքով սահմանված այլ դեպքերի» :

~~2) Օրենքի 15.5 -րդ հոդվածի 1 -ին մասի 5 -րդ կետը լրացնել նոր պարբերություն.~~

~~«Կարճվում են գույքային բռնագանձումներով, և ոչ գույքային բնույթ ունեցող բոլոր կատարողական վարույթները, բացառությամբ քաղաքացու վտարման, ինչպես նաև պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթների:»~~

Հոդված 2. Օրենքի 39-րդ հոդվածի 2-րդ մասի

~~1) 2 -րդ կետում «դրամական կամ այլ» բառերը փոխարինել «գույքային» բառով:~~

~~2) 4 -րդ կետում «պարտապանի դեմ պարտատերերի» բառերից հետո լրացնել «գույքային» բառով.~~

~~3) 5 -րդ կետում «հայցի ապահովման, բռնագանձման և այլ բնույթի ցանկացած կատարողական վարույթ, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեպքերի» բառերը փոխարինել «գույքային բռնագանձման և ոչ գույքային բնույթ ունեցող ցանկացած կատարողական վարույթ, բացառությամբ քաղաքացու վտարման, ինչպես նաև պատվին, արժանապատվությանը կամ գործարար համբավին պատճառված վնասի հատուցման վերաբերյալ կատարողական վարույթների և սույն օրենքով սահմանված այլ դեպքերի» բառերով:~~
5-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.
«5) կարճվում է պարտապանի վերաբերյալ գույքային բռնագանձումներով և ոչ գույքային բնույթ ունեցող ցանկացած կատարողական վարույթ, որոնք չեն ազդում սնանկ ճանաչված պարտապանի գույքի կազմում ներառվող գույքի և իրավունքների վրա, ինչպես նաև սույն օրենքով սահմանված այլ դեպքերի» :

Հոդված 3. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: